

15148

891.99

C-64

2003

КОГДА КНИГА ВЗЯТА

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

2

891.99
Շ-64
Ա.Մ

ՇԻՐԱԿԵՑԻ

612
908

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Շ-74

Ի Ր Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ի Ց

Ա.

№3075.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՒՏԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ ՆԱԽԱՐԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ
ԻՆԴԵՔՏՐԻԶԱԿՆԵՐ 1936 Դ.
№

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՈՒ
ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ:

1892

3327

4 2 1 4 12 7 4 5

111714230

8 4 9 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100 101 102 103 104 105 106 107 108 109 110 111 112 113 114 115 116 117 118 119 120 121 122 123 124 125 126 127 128 129 130 131 132 133 134 135 136 137 138 139 140 141 142 143 144 145 146 147 148 149 150 151 152 153 154 155 156 157 158 159 160 161 162 163 164 165 166 167 168 169 170 171 172 173 174 175 176 177 178 179 180 181 182 183 184 185 186 187 188 189 190 191 192 193 194 195 196 197 198 199 200 201 202 203 204 205 206 207 208 209 210 211 212 213 214 215 216 217 218 219 220 221 222 223 224 225 226 227 228 229 230 231 232 233 234 235 236 237 238 239 240 241 242 243 244 245 246 247 248 249 250 251 252 253 254 255 256 257 258 259 260 261 262 263 264 265 266 267 268 269 270 271 272 273 274 275 276 277 278 279 280 281 282 283 284 285 286 287 288 289 290 291 292 293 294 295 296 297 298 299 300 301 302 303 304 305 306 307 308 309 310 311 312 313 314 315 316 317 318 319 320 321 322 323 324 325 326 327 328 329 330 331 332 333 334 335 336 337 338 339 340 341 342 343 344 345 346 347 348 349 350 351 352 353 354 355 356 357 358 359 360 361 362 363 364 365 366 367 368 369 370 371 372 373 374 375 376 377 378 379 380 381 382 383 384 385 386 387 388 389 390 391 392 393 394 395 396 397 398 399 400 401 402 403 404 405 406 407 408 409 410 411 412 413 414 415 416 417 418 419 420 421 422 423 424 425 426 427 428 429 430 431 432 433 434 435 436 437 438 439 440 441 442 443 444 445 446 447 448 449 450 451 452 453 454 455 456 457 458 459 460 461 462 463 464 465 466 467 468 469 470 471 472 473 474 475 476 477 478 479 480 481 482 483 484 485 486 487 488 489 490 491 492 493 494 495 496 497 498 499 500 501 502 503 504 505 506 507 508 509 510 511 512 513 514 515 516 517 518 519 520 521 522 523 524 525 526 527 528 529 530 531 532 533 534 535 536 537 538 539 540 541 542 543 544 545 546 547 548 549 550 551 552 553 554 555 556 557 558 559 560 561 562 563 564 565 566 567 568 569 570 571 572 573 574 575 576 577 578 579 580 581 582 583 584 585 586 587 588 589 590 591 592 593 594 595 596 597 598 599 600 601 602 603 604 605 606 607 608 609 610 611 612 613 614 615 616 617 618 619 620 621 622 623 624 625 626 627 628 629 630 631 632 633 634 635 636 637 638 639 640 641 642 643 644 645 646 647 648 649 650 651 652 653 654 655 656 657 658 659 660 661 662 663 664 665 666 667 668 669 670 671 672 673 674 675 676 677 678 679 680 681 682 683 684 685 686 687 688 689 690 691 692 693 694 695 696 697 698 699 700 701 702 703 704 705 706 707 708 709 710 711 712 713 714 715 716 717 718 719 720 721 722 723 724 725 726 727 728 729 730 731 732 733 734 735 736 737 738 739 740 741 742 743 744 745 746 747 748 749 750 751 752 753 754 755 756 757 758 759 760 761 762 763 764 765 766 767 768 769 770 771 772 773 774 775 776 777 778 779 780 781 782 783 784 785 786 787 788 789 790 791 792 793 794 795 796 797 798 799 800 801 802 803 804 805 806 807 808 809 810 811 812 813 814 815 816 817 818 819 820 821 822 823 824 825 826 827 828 829 830 831 832 833 834 835 836 837 838 839 840 841 842 843 844 845 846 847 848 849 850 851 852 853 854 855 856 857 858 859 860 861 862 863 864 865 866 867 868 869 870 871 872 873 874 875 876 877 878 879 880 881 882 883 884 885 886 887 888 889 890 891 892 893 894 895 896 897 898 899 900 901 902 903 904 905 906 907 908 909 910 911 912 913 914 915 916 917 918 919 920 921 922 923 924 925 926 927 928 929 930 931 932 933 934 935 936 937 938 939 940 941 942 943 944 945 946 947 948 949 950 951 952 953 954 955 956 957 958 959 960 961 962 963 964 965 966 967 968 969 970 971 972 973 974 975 976 977 978 979 980 981 982 983 984 985 986 987 988 989 990 991 992 993 994 995 996 997 998 999 1000 1001 1002 1003 1004 1005 1006 1007 1008 1009 1010 1011 1012 1013 1014 1015 1016 1017 1018 1019 1020 1021 1022 1023 1024 1025 1026 1027 1028 1029 1030 1031 1032 1033 1034 1035 1036 1037 1038 1039 1040 104

Дозволено цензурою. Тифлисъ, 24-го Февраля 1892 года.



2039

41

Типографія К. С. Саноянца, Александрополь,
Бебутовская ул., соб. д.

1 704 96778 61441.95 30910.4

ԻԻՐ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՄԹՐ,

Կի մարտիկն մարտիկ, միտն լոգ չեւանն ի ցա իմոյ
 գնն քնն ցա իմոյ, ի պիտանայնն ի ցա ման լոգ լանայ
 քանդանքն ի մարտնայն քնն քան լոգ քնն լոգ քնն լոգ

ԹԱԳՈՒՅԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԲԷԲՈՒՐԵԱՆԻ

1. The first of these is the fact that the
 2. second of these is the fact that the
 3. third of these is the fact that the
 4. fourth of these is the fact that the
 5. fifth of these is the fact that the
 6. sixth of these is the fact that the
 7. seventh of these is the fact that the
 8. eighth of these is the fact that the
 9. ninth of these is the fact that the
 10. tenth of these is the fact that the

Բնի իրացի իմ Դամիան զի իսկուսանիս իրացի քի
 և զնի զնիս ամուսնացանք ճիշդ ճիշտութի զի Դամիան իմ

ամենոռաց յիշատակին

1. The first part of the book is a general introduction to the study of the history of the world, and is divided into three chapters. The first chapter is on the origin of the world, and the second chapter is on the origin of man. The third chapter is on the origin of the human race.

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՇԻՐԱԿԵՑԻՆ.

ԳՈՐԾԱԳՈՒԹ ՄԱՅՐ ԻՄ !

Քանի որ կ' մտածեմ քոյ մասին, այնքան նւիրական կը դառնայ քոյ անունը և յիշատակը. կ' յիշեմ, որ երբ մենք զըկանք հօրից, դու եղար մեզ պաշտպան և կերակրող: Դու հանգիստ չունէիր աշխատանքից, իսկ մեզ պահում էիր կարելոյն չափ վայելուչ վիճակի մէջ:

Մինչ դեռ օտարների տան մէջ ամեն օր կռիւ ու բամբասանք էր, մեր տանը քոյ շնորհիւ թագաւորում էր հրեշտակային խաղաղութիւն:

Քոյ ձեռքերով ճախարակ էիր մանում, իսկ լեզուով մեզ սովորեցնում էիր Քրիստոնէական վարդապետութիւնը և Ս. Աւետարանի սքանչելի խօսքեր:

Հոգւով չափ ցաւում եմ, որ մենք բաղդ չունեցանք քոյ մայրական խնամքը մի բանի տարի ևս վայելել, քոյ երակատեաց յարգն ճանաչել, բեզ պատուել ու մեծարել: Շատ շուտով կնքեցիր քոյ բազմաշարժար կեանքը:

Հրատարակելով այս առաջին աշխատութիւնը, սուրբ պարտք համարեցի նուիրել քոյ անմահ յիշատակին: Եւ թող օրհնեալ լինի քոյ բարի յիշատակը և անունը, որ մենք չենք կարող մոռնալ յաւիտեան:

Շ.

Ի.

✓ 3075.

ԱՆՏԵՐՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐ

Ա.

Աշունքը մօտենում էր իր վախճանին: Յուրտ քամիները աղմուկ բարձրացնելով, ծեփում էին ձիւնը պատուհանների ապակիներին: Ամեն մի արալած պատրաստվում էր ձմեռուան դիմաւորելու: Ծառերը վաղուց մերկացել էին տերեւներից և անդադար շարժվում էին: Ընտանի անասունները փակված մութ դռների մէջ, բառանչում էին. նըրանց խիստ դառն էր զըկվել արգաւանդ դաշտերից ու ազատ օդից: Դրսում անտանելի ցեխ էր: Մարդիկ կարկատում էին կտուրների ծակ ու ձեղը: Ամեն ինչ տխուր էր:

Ա. քաղաքի լայն փողոցներից մէկի մէջ գտնվում էր ծերունի Յակոբի տունը: Այդ տան դուռը չը նայելով եղանակի վատութեան «կրնկի վրա» բաց էր: Բոլոր դրացիները անդադար ել և մուտ էին անում և ամենի դէմքի վրա նըրմարվում էր տխրութիւն...

Առաքինի ու բարեպաշտ Յակոբը պարկած էր մահճի մէջ. այդ օրը նրա հիւանդութեան ութերորդ օրն էր. նա սաստիկ ջերմութեան մէջ էր: Նրա շուրջը բոլորվել էին իր բարեկամները, ազգականները և ծանօթները:

Կէս գիշեր էր:

Հիւանդի մօտ դեռ վառվում էր ճրագը: Հիւրերից շատերը նիրհում էին: Միայն հիւանդի ամուսինը արթուն աչքով հսկում էր, ծածկում էր վերմակը հիւան-

դի վրա և երբեմն դժարով դեղ էր տալիս և լի տխրութեամբ արթո՛ւմ էր. . .

— Մարիամ, դարձաւ նա դէպի ամուսինը— դիտես, որ ինձ այնքան ցաւը չէ տանջում, որքան այդ անմեղները, նա մատնացոյց արաւ իր վեց երեխաների վրա, որոնք նոյն սենեակում ննջում էին:— Նս հաւատիս պէս զիտեմ, որ «մեծ չքոտը» մեռնելուցս յետոյ չը պէտք է կառավարէ դրանց, այլ և գուցէ փողերը խժռէ. . . — այն ժամանակ այդ անմեղ երեխայքը ինչ պիտի անեն. . . Քո շնքի վրա պէտք է մնան: Ախ, Տէր Աստուած, ի՞նչ պէտք է լինի ձեր վիճակը. . . Ո՛ւր է, մինչև այժմ տուն չէ եկել. . . վերջին խօսքերը մեծ որդու մասին էր, որ մի բսան ու հինգ ամեայ անբարոյական և զեղութեան հետեռող երիտասարդ էր:

Եթէ մի ուրիշը լինէր տիկին Մարիամի տեղը, այդ խօսքերի ժամանակ կը կորցնէր ինքն իրան, բայց տ. Մարիամը զսպեց իր խռովութիւնը և հանդարտ յոյսեր տալով ասեց հիւանդին.

— Հոգ մի ընէք, Աստուած ձեզ կառող ջաջնէ ու դարձեալ կը խնամէք անմեղներին: Ինչքան որ մեծ է փտանդը, նոյնքան և տանապատիկ մեծ է Աստուծոյ ողորմութիւնը: Մի՛թէ Աստուած կը կորցնէ:

Այս խօսքերը ասեց նա այնպիսի հանդարտ և մարդարէութեամբ եղանակով, որ խիստ դուր եկաւ տառապող հիւանդին և նա յոյս դնելով նախախնամութեան վրա, փոքր ինչ հանգստացաւ:

— Մարիամ, — դարձաւ կրկին դէպի ամուսնուն, — դիտես, այս ցաւը, որ փաթաթվել է ինձ, ուրիշ բան չէ, եթէ ոչ— գերեզմանի մոտքը. իսկ այս մահի՛ճը մահուան նախադաւիթն է. . . Նս ինչքան էլ որ ցանկայի ապրել, տես

նել ձեզ լաւ դրութեան մէջ, մեծացնել փոքրիկներին, այնու ամենայնիւ այդ անկարելի է: Ժամանակը կարճ է. . . Աստուած կոչում է ինձ, կամք Նորա է. . . Բայց կուգէի վերջին պատուերս տալ ձեզ: Նրբ կը տեսնես տանդ մէջ աղմուկ, երբ իմ մեծ որդին կը շարունակէ իր լըրբ կռիւները, մէկ խօսքով, երբ ընտանեկան քաղցր կեանքը կ'դառնանայ, այն ժամանակ կանչիր դու հարևանին, բարեկամներին և բաժանային և վերջ դրէք կռիւներին, բաժանեցէք ինչ որ կայ:

— Միք վախենայ, Աստուած չի կորցնի ձեզ, որքի տէքն Աստուած է: Նս հաւատում եմ, որ դուք կապրէք: Յուսացէք Աստուծու վրա: Նա է այժմ ձեր հայրը, ձեր ինձամեկալը, ձեր պաշտպանը և ապաւենը. . . Նա ընկաւ մտածութեան մէջ:

Մահուան տագնապը կաշկանդել էր ծերունու բոլոր անդամները: Նրկար նա հառաչում էր, արձակում էր անխմստ ու անկապ բառեր: Տ. Մարիամի խռովութեանը չափ չը կար: Նա գգում էր իր անտանելի դրութիւնը. նա զիտէր, ու իր ուժից վեր է վեց որբ կառավարելը, նա տեսնում էր որդուն, որը զեռ մարդու կենդանութեան ժամանակը ինչ սատանայական պլաններ էր սարքում: Գեռ աւմուսնու կենդանութեան ժամանակը յանդգնում էր հայհոյել, անպատուել մօրը: Ի՞նչ պէտք է անէր ինքն իր ամուսնու մահից յետոյ: Տան մէջ ապրել անկարելի էր, բաժանվել նոյնպէս մեծ դժուարութիւն էր:

Խորին յուսահատութեան մէջ նա մտաւ արթատունը, որը իրանց սենեակներից մէկն էր: Արտասուալից աչքերով ընկաւ Աստուածամօր ս. պատկերի առաջ. . .

Աստուած միայն զիտէր, թէ ինչ էր խօսում նրա

սիրտը, նրա միտքը սլացել, թռել էր մինչև երկինք, մինչև Ամենակալի ու Ամենաողորմածի մօտը: Նա, ուղղած իր արտասուլի աչքերը դէպի որբերին խնամողը, երկար ժամանակ աղօթում էր:

Այդ միջոցին լսելի եղաւ հիւանդի ձայնը: Նա շուտով վերջացրեց աղօթքը և շտապեց հիւանդի մօտ:

— Կանչեցէք քահանային, ասեց նա հրամայական եղանակով: Մինչդեռ տ. Մարիամը, շարած, դանդաղ քայլերով գնաց տղաներից մէկին զարթեցնելու, այդ միջոցին նոցանից մեծը, որ կոչվում էր Ստեփան, արդէն հագնված պատրաստվում էր հօր հրամանը կատարելու: Իրան մէջ նա պատահեց մօրը:

— Ի՛նչէ պատահել, մայրիկ, ի՛նչու հայրիկը կանչում է տէրտէրին:

— Ունչ, զաւակս, ես քեզ յետոյ կը պատմեմ, միայն շուտ վազէ տէրտէրի տունը, ասա հայրս կանչում է: Ո՛ր է, ինչ եղաւ մեծ եղբայրդ, դեռ տուն չէ եկել:

— Նոր եկաւ, մայրիկ, պառկեց քնելու, ասեց Ստեփանը ու շտապով դուրս թռաւ:

Մի քանի վայրկեանից յետոյ եկաւ քահանան: Հիւանդը, որ տառապում էր, ուշի եկաւ, ժողովեց իր մտքերը և խօսեց տէր հօր հետ: Ապա խոստովանվեցաւ և ընդունեց ս. հաղորդութիւնը: Ապա աւելի զօրանալով կանչեց իր մօտ բոլոր տղաներին: Մի առ մի համբուրեց զաւակներին, օրհնեց և ասաց ամենքին «վերջին մնաք բարեւը»: Տունը լըցվեցաւ լացով... Հերթով տղայքը մօտենում էին ու լալով համբուրում էին իրանց կերակրողի ձեռքը: Միայն կրտսեր Պարոյրն էր, որ չէր լալիս. նա դեռ երկու տարեկան էր. նա չէր հասկանում հօր խորհրդաւոր խօսքերի իմաստը:

Նա տվեց իր փոքրիկ ափիկները թշուառ հօր ձեռքը և անմեղ ժպտում էր: Հայրը հրամայեց, որ բոլորն էլ դուրս գնան: Հիւանդի մօտ մնացին տ. Մարիամը և խոստովանահայր քահանան: Մինչև վերջին շունչը հիւանդը խելքը գլուխը աղօթում էր: Նա բարձրացրեց իր թոյլ բազուկները դէպի երկինք ու ասեց բարձր ձայնով. «Արդ արձակեա՛լ զճառայս քոյ ...» և աւանդեց հոգին:

Խոստովանահայրը փակեց նրա աչքերը:

Բ.

Անցել էր մօտաւորապէս մէկ ամիս այն օրից, երբ ծերունի Յակոբի դադաղը հողը դրին: Ծերունու գուշակութիւնները կատարվեցան:

Տ. Մարիամի տունը ներկայացնում էր մի զգուշիկ տեսարան: Նախկին ընտանեկան քաղցրութեան փոխարէն այժմ տիրում էր այնտեղ անհամաձայն դառնութիւն, սիրոյ փոխարէն—անվերջ ատելութիւն, խաղաղութեան փոխարէն՝ կռիւ, ուրախութեան և ծիծաղի փոխարէն—տրտմութիւն ու լաց: Ամեն բան տակն ու վրայ էր եղել:

Անդրանիկ ուրվին, որ կոչվում էր Անդրէաս, սաստիկ կռվասէր և անբարոյական մարդ էր: Հօր մահից յետոյ տան կառավարութիւնը իր ձեռքն առաւ: Հետեւելով իր մի քանի դատարկաշրջիկ և անբարոյական ծանօթների խորհուրդներին, նա յանդգնեցաւ մինչև անգամ որբերի ժառանգութիւնը յափշտակել, նրանց բերանի հացը խլել...

Վեց ամիս նա իշխեց հօր ստացվածքի վրա: Ամեն բան «կարգի դնելուց» վերջը երբ տեսաւ, որ իր «ապադան» բոլորովին ապահով է, լերբ ընկերների դրդմամբ

սկսեց հալածել մօրը: Այդ բոլոր անկարգութիւնների պատճառը մի օր թշուառ մայրը հարցրեց:

— Ես «շուն» պահելու կարողութիւն չունեմ, ասեց նա լրբաբար: Ես ի՞նչ պարտական եմ քո «լակոտներին» կերակրել: Ես պարտական եմ միայն իմ կնոջ ու զաւակներին: Վաղօրօք դուրս ելէք . .

Տիկին Մարիամը մի անփորձ կին էր. նա ոչինչ տեղեկութիւն չունէր օրէնքներից: Նա գիտէր թէ անդրանիկը լիազօր իրաւունք ունի ինչպէս հօր կայքերի, նոյնպէս և ժառանգների վրա: Այդ պատճառով լուռ համբերում էր որդու անարգանքներին:

Խեղճ կինը չէր գիտէր ինչպէս վերջ տալ այդ տարօրինակ կեցութեանը: Որդու և հարսի լրբութիւնները հասնում էին վերին աստիճանի ծայրայեղութեան: Նրբ որդին անարգում է իր ծնողին, օտարի աղջիկը տանապատիկը կանէ: Այսպէս էր և տ. Մարիամի տունը: Օրը չէր անցնի առանց կռիւի, առանց հայոյանքի: Յերեկը հարսն էր նեղացնում, իրիկունը որդին: Խեղճի տունը դառել էր դժոխք: Որբիկները մինչև անգամ գլխի ընկան. պէտք է մարդ տ. Մարիամի սրտի մէջը թափանցէր ու տեսնէր թէ ի՞նչ եղաւ նրա սիրտը, երբ փոքրիկ Պարոյրը հարցրեց.

— «Մայրիկ, եղբայրը միշտ խմած է լինում, որ մեզ հայոյում է:»

Այսպէս ապրել անկարելի էր: Բոլոր բարեկամները ու ծանօթները խորհուրդ էին տալիս նրանց բաժանվել, բայց տիկին Մարիամը միշտ հաւանութիւն չէր տալիս. նա լաւ էր համարում անարգանքներին համբերել, բան թէ տունը առանց մեծի թողնել: Մինչև վեց ամիս նա տալիս էր համբերութեամբ իր որդու բոլոր կոպտութիւնները.

Մի օր երբ որդին դարձեալ կրկնում էր իր լրբ հայոյանքները, մայրը այլ ևս չէր կարողացաւ համբերել, ասաց. «Որդի, դու մի պահի, ոչինչ . . շահ տէրն էլ Աստուած է: Դու կը կորցնես մեզ, յոյս ունեմ Աստուած չի կորցնի:»

Որդուն էլ այդ էր պէտք:

Գ.

Հետեւեալ օրը տ. Մարիամի տունը ժողովվել էին նրա բոլոր բարեկամները: Անդրանիկը նրանց հրաւիրել էր, որ դան ու իր բաժինը որոշեն: Թէ տ. Մարիամը և թէ բարեկամները ոչինչ տեղեկութիւն չունէին, որ Անդրէասը իր բեռը բարձիւ է վեց ամիս առաջ, ուստի ինչ որ աչքի ընկաւ՝ եօթ մաս արին և մէկ մասը տվեցին դուրս եկողին: Որպէս զի ծնողք և եղբայրը չէր կարողանան իրանից պահանջ ունենալ, Անդրէասը առաջարկեց, որ իրան գիր տան: Այդ գրի մէջ գրեց. «Ես իմ յօժար կամօք բաժանվելով մօրից և եղբայրներից, ստացայ իմ լիովին պահանջս, այսուհետև ոչ մի իրաւունք չունեմ մի մալի չափ բան պահանջելու: Նոյնպէս մայրս և եղբայրքս չունին իրաւունք մի բան պահանջելու այժմ և ապագայում» և այսպէս անխնամ ձգելով մօր վրա վեց որբերը, նա հեռացաւ:

Բարեկամները մնացին շփարած: Ինչով պէտք է կառավարվեն այս որբերը, հարցնում էին միմեանց, որ վեց ամիսոյ պաշտօն էլ չէ մնաց: Յանկարծ մի միտք է ծագում նրանց գլխում. «Կէ կարելի արդեօք, որ ամենքս մէկ մէկ տղայ վեր առնենք ու խէրի համար պահենք:» Այդ միտքը շատերին դուր եկաւ, մանաւանդ Կիրակոսին: Կիրակոսը մի հարուստ ծեր էր. նա ոչ մի որդի չունէր, այդ պատճառ

ռով նա ընտրեց որպէս որդեգիր փոքրիկ Պարոյրին: Միւս բարեկամներն էլ ամենքը մէկ մէկ տղայ ընտրեցին. բայց դեռ մեծ դժուարութիւնը մնացել էր: Ի՞նչ պէտք է անէր ա. Մարիամը: Տիկինը այդ սակարկութեանը ներկայ չէր. Բարեկամները երբ յայտնեցին իրանց դիտաւորութիւնը, տիկինը խիստ զայրացաւ:

— Ո՛վ դուք անսիրտ մարդիք, — ասեց նա, — անասունները մինչև անգամ դուժ ունեն իրանց ձագերի վրա, չեն թոյլ տալիս որ կորչեն, մի՞թէ ես անասունից էլ վատ եմ, որ թոյլ տամ իմ որդոցը ձեր քմաց պէս բաժանելու: Ա՛խ, Տէր Աստուած, ինչո՞ր ինձ այս օրերը վեճակեցիր. . .

Բարեկամները խռոված տնից դուրս եկան: Տիկինը մնաց միայնակ: Նա բարձր համարեց որդոցը հետ միասին սովից մեռնել, քան թէ սիրելի զաւակներից անջատվել:

Դ.

«Զրկողը կը զրկվի»

(Ժող. ուսմ.)

Սնցել էր այդ սրտաշարժ օրից վեց տարի: Կ. Պօլսի նեղ և կեղտոտ փողոցներից մէկում թափառում էր մի շերակեցի մարդ: Նա գնում էր դանդաղ քայլերով. նրա դէմքի վրա երևում էր խորին յուսահատութիւն: Նրանում էր որ այդ ճանապարհորդը յոգնած է: Նրա ոտքերի ուժը թուլացան, այլ ևս չը կարողացաւ նա շարունակել իր քայլերը: Նա կանգնեց: Նրկար նա մտածում էր, թէ ինչով վերջ տայ իր տրամուլթեանը: Նրա աչքին ընկաւ դիմացի «մեհենան» (գինետունը). նա մտածեց գոնեա ըմպելիքով վերջ տայ իր

տրամուլթեանը: Բայց ի՞նչով. գրպանում ոչ մի ստակ չը կար: Նա մնաց անվճարութեան մէջ: Գնար թէ չը գնար, մնաց անորոշ: Վճռեց երթալ:

Դանդաղ քայլերով նա բարձրացաւ գինետան սանդուղտներով: Ներս նայեց, տեսաւ ամեն ազգի, ամեն գոյնի մարդիկ խառնիխուռն լըվել էին: Ոմանք խմում էին, ոմանք ծըխում էին, ոմանք վեճում էին և կաշկանդվելով ծեծկվում էին, կամ ինչպէս ասում են, «չունը տիրոջը չէր ճանաչում»: Շիրակեցին ներս մտաւ: Հիւրերից ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց նրա վրա, միայն մէկի սրատես աչքերից չը կարողացաւ անյայտ մնալ: Այն մարդը բնիկ երևանցի էր, լաւ ծանօթ էր Շիրակեցուն: Նա ձեռքի շաժվածքով կանչեց իր մօտ եկվորին, որը ուրախութեամբ դիմեց դէպի կոչող ձեռքը:

— Ո՞րտեղացի ես, հարցրեց նա և ցոյց տուեց նստարանը:

— Շիրակեցի եմ, պատասխանեց եկվորը:

— Ի՞նչով կը պարապիք այստեղ:

— Ա՛ռ այժմ ոչինչով, պատասխանեց շերակեցին և մի խոր հոգոց քաշեց որտից:

Կոչող երիտասարդը տեսնելով, ու հիւրը շատ յոգնած է, կարճացրեց իր հարցմունքները և խնդրեց, որ մի բաժակ բո՞ւ ընդունէ: Ոգեից ըմպելին կազդուրեց երիտասարդի երանքները, կարծես նոր ոգի և ուժ ստացաւ: Նա չզիտէր, թէ ինչով շնորհակալ լինի իր բարերարից: Բարերարը, որ դուրս էր գնացել, վերադարձաւ բերելով իր հետ երկու բաժին խորոված:

Ճաշի միջոցին ըմպելին առատ էր: Երիտասարդները ուտում և խմում էին: Մեր շերակեցին, որ կարծում էր

խմելըով վերջ տալ իր տրտմութեանը— սխալվեցաւ: Փռնանակ ուրախանալու, բռնել աւելի միտքը բերեց հարեւիքը, մօրը, տուն և ընտանիքը. . . Հիւրընկալը, որ ցանկանում էր սփռիկել հիւրի տրտմութիւնը, մոռացնել տալ նրա ցաւերը, ի զուր էր աշխատում առժամանակեայ ուրախացնելու նրան:

— Դու հարցնում էիր թէ «ի՞նչով ես պարապում», ասեց նա դառնալով դէպի հիւրընկալը— բայց չես հարցնում «ի՞նչ ե քեզ ձգել մինչև Բիւզանդիայի խորը, մինչև Վոսփորի ափերը. . .

— Հո, լաւ ասիր, Սնդրէ եղբայր, ես էլ հէնց այդ պէտք է հարցնէի: Ճշմարիտն ասաց, այն օրից, երբ դու երեւանից մերադարձար, այլ ես տեղեկութիւն չունէի քո մասին: Դու այն ասա, շարունակեց նա, բոլոր բրինձները որ առար, ծախեցիր:

— Ի՛հ, օրհնած, ի՛նչ ես կորցրել, ինչ ես որոնում, ոչ բրինձ է միտս գալի, ոչ բամբակ:

Հիւրընկալը տեսնելով, որ անախտութեամբ թվեցաւ իր հարցմունքը, ուզողից իր խօսքը և դառնալով դէպի ծածօ թը՝ շարունակեց:

— Ներեցէք, դիտե՛ն, սխալվեցի, սատանան գիտէ՛ ով այդպէս յանկարծ միտս ձգեց այս տարօրինակ հարցը— միայն խնդրեմ պատմիր, քանի ընկերով էք այստեղ:

— Թող Աստուած օրհնէ, վարձատրէ ձեզ, սիրելի Կարապետ: Ինչքան որ դուք ինձ օգնեցիք, Աստուած ձեզ տանադատիկը օգնէ, ինձ կերակրելու համար Աստուած ձեզ իր ողորմութեամբ կերակրէ:— Թող ուրեմն, շարունակեց նա, — թող սիրելի եղբայր, պատմեմ իմ յանցանքները, իմ անառակութիւնները, որոնք ինձ այս օրին թողին, որոնք

գիշեր ցերեկ կարծես ինձ հալածում են: Թող պատմեմ, գուցէ սիրտս. . .

— Պատմիր, ասեց հիւրընկալը հանդարտութեամբ:

— «Քեզ լաւ յայտնի է, որ մենք մեր քաղաքում ունէինք բաւականին լաւ ասպուստ: Տասը մարդուց եթէ ստոր լինէինք, տասից էլ բարձր էինք: Ես իմ երիտասարդութեան առողջ ժամանակը անցանում էի անգործութեամբ, գելսութեամբ և շոայլութեամբ: Այդպիսիների ետեից կեղծները, տղուկի պէս ծծող բարեկամներ են լինում: Նոյնպէս և իմ «ընկեր տղայքը» շատ էին. ամեն մարդ, որ դատարկաշնչիկ էր, ցանկանում էր ինձ ընկեր դառնալու, որովհետեւ ես շոայլ— փողը շատ էր. . .

«Այսպէս յիմարարար անցուցի անցին ժամանակս: Հայրըս միշտ խրատում էր, աղաչում էր, որ յետ կենամ «ընկերներից», բայց ես չէի լսում: Ա՛խ, արդար ծերունի, ներքիւ անառակ որդուդ: Ընդհակառակը իրարար անարգուն հայհոյում էի նրան: Հայրս կամեցաւ ինձ պսակել: Ես չէի հասկանում, թէ ի՛նչ ասել է «պսակելը». . . Ինձ այնպէս էր թվում ամուսնանալը, որպէս «մի ձեռք նոր շոր հագնելը». . . Ես պսակվեցայ (սև լինէի այն օրը). այն օրից իմ կեանքը փոխվեցաւ: Ես որ առաջ շատ էի սիրում մեր տունը, այնուհետեւ ինձ թվում էր որպէս քանտ: Այն օրից մեր տան մէջ կոխ, հայոյանք անպակաս էր:

«Մեր հողաբարձու քահանան, որ մի ցածահողի եղուիտ էր, շատ անգամ գալիս էր մեր ընտանիքի մէջ հաշտութիւն ձգելու: Մենք բոլորովին հաւատացած էինք այդ զժողի որդուն: Իրտէինք նրան այնպէս, ինչպէս նրա շողորդ քաղցր լեզուն. . . Ո՛րքան գէշ բան է միամտութիւնը: Այդ քահանան պէտք է հաշտութիւն ձգեր մեր տան

մէջ, չը գիտէինք, որ նա է գլխաւոր խառնակիչը, նա է որով ցանող բանասարկուն, նա է բոլորիս կռիւների պատճառը—երկպառակիչը . .

«Այնքաւ մի ամբողջ տարի պսակվելէս: Հայրս մի օր հիւանդացաւ: Ես այդ ժամանակ կատարեալ խեղագար էի: Գինեմը ընկերներիս հետ ես շրջում էի կատարեալ անբանի պէս: Շողորորդ և բանաստեղծ ընկերներս կարողացան ինձ բոլորովին գլխէ գցել . . խրատում էին, որ հօրս բոլոր կայքը ձեռք ձգեմ ու բաժանվեմ . . Այսպէս և եղաւ: Ա՛խ, որքան գէշ բան է խղճի խայթով տանջվել . . Ես թողի անպաշտպան և անպաշար եղբայրներիս և քոյրերիս և հեռացայ հօր տանից: Սերտ սիրով կապվեցայ իմ «սիրելի» ընկերների հետ, որոնք լաւ գիտէին ինձ հրապուրելու եղանակները: . .

«Ամբողջ երեք տարի ոչ մի գործ չը սկսեցի, այլ միշտ նախդ փող միստում ու միստում էի: Դժուար է փող աշխատելը, բայց շատ հեշտ է միստելը: Լի, կիրակի բէֆի մէջ էինք: Ընկերներիս թիւը այդ ժամանակ կնապատկվել էր: Որտեղ փող բանը կայ, այնտեղ այնտեսակ մարդիկ շատ շուտ կը հաւաքվեն:

«Տանս ապրուստն էլ կատարում էի ամենայն շուտութեամբ, կինս ոչ մի բանի վերայ չէր մտածում, —բայց եթէ զարդարվել ու դրանք կանգնել: Այսպէս շարունակելով ես ինձ մի սարսափելի ապագայ էի պատրաստում: Հետզհետէ թողին ինձ ընկերներս, երբ հետզհետէ նվազում էր փողը: Երբ բոլորովին սպառվեց «փող ու բէֆը», սիրելի կարծած ընկերներս թողեցին ինձ ու հեռացան . . նրանք մինչև անգամ ծաղրում էին ինձ . .

«Վերջապէս ընտանեկան կեանքն էլ դառաւ ինձ հա-

մար դժողք: Աշխարհի մէջ ամենաթշվառ մարդը նա է, որի կինը իր դէմ արստամբվում է. . . Մնացի ես թշվառ, երբ ահագին փողեր խժռելուց յետոյ մի կտր պարտք էլ չլքեի թողի: Մտածում էի յանձնասպանութիւն գործել:

«Մի օր կբբ ամենեքեան քնած էին, ես արթուն ընկած էի այդպիսի մտածութեան մէջ: Յանկարծ մի միտք ծագեց մտքումս, «չ՛ կարելի արդեօք թողնել ընտանիքս և դիմել պանդխտութեան, գուցէ օրս յաջողվի:» Մտածածս արեցի: Հէնց նոյն գիշերում, երբ ամեն մարդ խոր քնած էր, ես վեր առի երկու հաց և մի ճանապարհորդական ցուպ ու հեռացայ:

«Այն օրից անցել է երկու տարի, որ ես թափառում եմ, բայց ամեն տեղ, ամեն քայլափոխում կարծես ինձ հալածում են: Կարծես ամեն յաջողութիւն ինձանից փախչում է: Խիղճն անհանգիստ է, կարծում եմ բոլոր մարդիկ ինձ թշնամի են. . . կարծես ամեն արարածները ինձ յանդիմանում են, ասելով. «Դու անառակ ես, դու պարտազանց ես, դու զրկեցիր քու եղբայրդ, խլեցիր նրանց բերանի հացը, Աստուած էլ քեզ զրկեց, Աստուած էլ քո որդոց բերանից հանեց, շան ու դայլի կերակուր արեց. դու թողիր նրանց որբ, անտէր, Աստուած էլ քեզ պէտք է թողնէ անտէր և անօգնական» . . . Ինձ իմ խիղճը խայթում է. . . Ես արդար եմ համարում Աստուծոյ դատաստանը. «Ձի զրկողը պէտք է զրկուի»:

Այսպէս երկար նստած թշվառը պատմում էր իր վաղեմի ծանօթին կեանքի արկածները: Յանկարծ մի զիւ ձգական ձայն լսվեցաւ: Դա երեկոյեան «Նամազի» հրաւերն էր, որով իսլամներին հրաւիրում էին դէպի մզկիթը: Նրիտասարդները վերջացրին իրանց խօսակցութիւնը, երբ տե-

ասն՝ որ օրը նետի պէս սլացել է, նրանք դուրս եկան մեհանայից և անհետացան նեղ ու խուլ փողոցներում:

Ե.

Մայիսեան գեղեցիկ առաւօտներէից մէկն էր: Անդրէասի զաւակները լալով որոնում էին իրանց հօրը: Խեղճերը երբ երկար որոնելուց յետոյ չը գտան, վագեցին մամոնց տունը, որ պատմէն մամին, որը միշտ դէպի թոռները ողորմած էր: Մամը թոռներին բերեց իր տունը և խնամում էր նրանց իր որբերի հետ հաւասար: Նա ուրախ սըրտով ասում էր՝ «ես կը խնամեմ, քանի որ փոքր էք, յոյս Աստուած կը մեծանաք, այն ժամանակ ինձ կը խնամէք:» Թոռներն էլ գոհ էին իրանց վիճակից: Բայց անգութ բաղդը տնօրինել էր նորից անտէր թողնել նրանց:

Տ. Մարիամը մահվան անկողնի մէջ աղաչում էր Աստուծուն, որ խնայէ որբերին ու իրան նորից առողջացնէ, բայց Աստուած կոչեց Իր մօտ բազմացաւ տիկնոջը:

Միւս օրը տ. Մարիամի դադաղը շրջապատել էին ութը փոքրիկներ. նրանք թրջում էին իրանց արտասուքով սիրելի մամի ցամաք գերեզմանը, որ փորված էր երկու փոքրիկ գերեզմանների մօտը. . . Նրանք դառն կերպով լալիս էին, որ մամը իրանց թողեց կրկին անտէր. . .



II

ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅ

«ՁՀաց մեր Հանապազորդ տուր մեզ աչսօր.»

Տէրահայրն աղօլէւ:

Ա.

1880 թ. յունիսրի 5-ն էր: Քրիստոսի ծննդեան ճրագայոյցի երեկոյն, Ա. քաղաքի փողոցները լցվել էին ժողովուրդով: Ամենքը շտապում էին դէպի եկեղեցին: Տէրահայրն իստքը քաղցր տպաւորութիւն էր թողնում ժողովուրդի վերայ: Փրկիչը խնդրում էր «Հանապազօրեայ Հաց» մարդկանց համար: Աստուածային խօսքը շատ մարդկանց բերանից թրջում էր դիպի բարձր. . . Նրբ վերջացաւ ժամերգութիւնը և քահանան օրհնելով ասաց՝ «Նրթայք ի խաղաղութեամբ», ժամաւորները ցրվեցան:

Այդ միջոցին երկու ընկեր դուրս եկան եկեղեցուց և դիմեցին դէպի տուն:

— Գիտե՞ս, Դարեգին, ասաց ընկերից մէկը. մեր քաղա-

քում շատ թշվառներ կան:

— Այո, շատ կան, մանաւանդ այս տարի, պատասխանեց միւսը:

— Ինչու հէնց այս տարի, միթէ առաջ չը կային, հարցրեց առաջինը փորձելով ընկերին:

— Որովհետեւ այս ձմեռը ուրիշ ձմեռ է, իրաւ է ունեցողը համար թանգութիւն է, բայց չունեցողը համար սով է, — այնպէս չէ, սիրելի Պարոյր:

— Ճիշտ այդպէս է, — ես կուզէի քո կարծիքն իմանալ: Նրեակայեցէք, այսօր ես պատահեցայ մի տխուր անցքի. բազարում մի քանի պուզ ալիւրի համար բիչ մնաց մարդասպանութիւն լինէր: Ախ, սիրելի, սիրտս կտոր կտոր եղաւ, երբ տեսայ խեղճ ամբօխը որպէս «մատաղ» բաժանեց իրար մէջ ալիւր և այն պուզը 5 ր. 4) կօպէկ. . .

— Բարեւ ձեզ, եղբայրներ, խօսեց մի ձայն կտրելով նրանց խօսակցութիւնը:

— Բարեւ ձեզ, պատասխանեցին ընկերները:

— Ուր էք գնում, հարցրեց նորեկը:

— Ուր պէտք է գնանք, գնում ենք տուն:

— Ախ, տղայք, սիրտս կտոր կտոր եղաւ:

— Ի՞նչ, Նփրեմ, ի՞նչու համար, հարցրեց Պարոյրը եկփորին:

— Եկէք և տեսէք, պատասխանեց Նփրեմը խոր հոգոյ հանելով:

Երեք ընկերները միասին գնացին քաղաքի նեղ փողոցներից մէկով: Յուրաքանչեւ չափ զօրեղ էր, բայց մեր երիտասարդները կարծես չէին զգում նրա զօրութիւնը: Նրանք շտապով քայլում էին: Նրանց մարդասէր սիրտը չէր հարցնում եղանակի վատթարութեան մասին: Մի քանի րո-

պէից յետոյ նրանք անհետացան փողոցի հեռաւորութեան մէջ:

Բ.

«Հարստութիւնը շատ բարեկամներ է ճարձմ, բայց աղքատը իւր բարեկամներէն զրկւում է»

Առաջ. ԺԹ. 4.

Քաղաքի «Հայոց թաղ» ասլաճ մասում մի նեղ փողոցի վերայ շինված էր մի հասարակ տուն: Ցան արտաքին տեսքը ցոյց էր տալիս, որ բնակիչները պէտք է լինին չափաւոր և սակաւապետ, և իրօք այս տան մէջ ապրում էր կաշեղործ Սէթը: Սէթը թէև աղքատ ծնողների զաւակ էր — բայց բարի ծնողները չէին զլացել ուսման տալու իրենց որդուն: Նրան ժամանակից շատ կ'սնուխ ամուսնացրել էին, հետեւելով այն առածին թէ՛ «մէկ շուտ վեր կենողը չէ խափվում, մէկ էլ շուտ պսակվող»: Այդ պատճառով Սէթը ծանրաբեռնված էր ընտանեկան հոգսերով: Առաքինի և ուսումնասէր Սէթը ոչինչ չէր խնայում իւր որդոց ուսման համար: Նրա չորս որդիքն էլ կարդում էին տեղային վիճակային հոգևոր դպրոցում: Սէթը մեծ դժվարութեամբ էր կարողանում նրանց վարժապետների վարձը տալ, եւ ինչպէս ասում են «բերանից և ակօայից էր կտրում». . .

Նա սեպհական դրամագլուխ չունէր, որ կարող լինէր «բէ մուննաթ», այսինքն առանց օտարին խնդրելու ապրել

— այլ նա աշխատում էր որպէս վարձկան և իւր աշխատութեան վարձ ստանում էր օրական 70 կօպէկ:

Ծանրաբեռնված նիւթական և բարոյական հոգսերով — Սէթը դարձեալ եռանդով կատարում էր իւր պաշտօնը: Նա կանուխ գնում էր արհեստանոց և ամենից առաջ ձեռքն էր առնում իւր գործը:

Աշնան ցուրտ օրերից մէկն էր:

Կաշեգործ Սէթը կանգնած սառ ջրերի մէջ անխոնջ կերպով աշխատում էր: «Ոհ, թէ այսօր աւարտէի այս կաշիները, անշուշտ տղաներիս համա մի մի զոյգ կօշիկներ կը ստանայիս», մտածում էր ինքն իրեն:

Երեկոյան 40 կաշի կազմ ու պատրաստ էր: Սէթը մաքրած կաշիները յանձնեց աղայի գործակատարին, և նրանից ստացաւ մի տոմսակ, որով աղայից պէտք է ստանար իւր աշխատանքի վարձը: Արդէն մթնել էր, երբ Սէթը դանդաղ մտաւ աղայի սենեակը:

— Հը, ի՞նչ կայ, ուստայ Սէթ, հարցրեց Կիրակոս աղան աչքերը վեր բարձրացնելով. աւարտեցիր:

— Հրաման բէ, աղայ, աւարտեցի:

— Ո՞րքան կարողացար դուրս բերել:

— Քառասուն հատ, պատասխանեց Սէթը խոնարհութեամբ:

— Քառասուն. . . Սիթէ. այդ ինչպէս եղաւ, իրա՞ն ես ասում:

— Հրամայեցէք ահա տոմսակը, ասելով Սէթը ներկայացրեց գործակատարի թուղթը:

— Ի՞նչ խաբար է, ուստայ Սէթ, դու ոչ մի ժամանակ չէիր կարողանում այսքան մաքրել, այսօր ի՞նչպէս եղաւ:

Սէթը չպատասխանեց: Նրան շատ զարմացրեց աղայի

վարմունքը:

— Լա, ասաց աղան, — ահա քեզ տասը հատի վարձը, կը հարցնեմ, եթէ 40 հատ եղաւ, այն ժամանակ 30 հատի վարձն էլ կը տամ:

— Այո, հօ սուտ չեմ խօսում, եթէ ինձ չէք հաւատում, ահա ձեր գործակատարի գրութիւնը: Տվէք խընդրեմ իմ վարձը. այսօր շատ հարկաւոր է:

— Ես ի՞նչ մեղաւոր եմ որ հարկաւոր է. լաւ, եթէ այդպէս շատ ես ինդրում, ահա քեզ 20 հատի վարձը, մնացածը թող մնայ:

Խեղճ Սէթը մնացել էր շվարած. նա լաւ գիտէր, որ Կիրակոս աղան մի ազահ և կասկածոտ մարդ է, այդ պատճառով տոմսակ էլ առաւ գործակատարից, — բայց աղան չէր հաւատում վարպետին, չէր հաւատում նաեւ իւր գործակատարին: Նա միշտ պահում էր աշխատաւորի վարձը իւր մօտ, որպէս զի նա միշտ «կապված» մնայ, յետոյ նա կը կտրէր իւրաքանչիւրից 40—50 կօպէկ զանազան պատճառներ բռնելով: Սէթի գլխին էլ այդ «օյինը» պէտք է խաղար: Սէթը լաւ գիտէր աղայի բնութիւնը, ուստի առանց երկար մտածելու՝ ասաց դառնութեամբ:

— Տվէք ինձ պատկանեալը, մի կտրէք իմ փողը. զոնէ մտածեցէք, որ եօթը հոգի այդ փողով պէտք է կառավարվեն, տվէք աղաչում եմ:

— Ես կատակ չեմ անում, քսանի փողը կտամ, աւել մի կոպէկ էլ չեմ տալ:

— Դէհ, Աստուած ձեզ հետ, տվէք ես գնամ, կրկին խօսեց դառնացած Սէթը:

Արդէն գիշեր էր, երբ վարպետ Սէթը անիծելով իւր չար բաղդը՝ դուրս եկաւ աղայի տանից: Յուրտ եղանակը,

դժվար աշխատութիւնը և հին հագուստը — բոլորը միասին վատ դրութեան մէջ ձգեցին վարպետ Սէթին և թըշվառը համարեայ դողդողալով մտաւ իւր տունը:

Գ.

Այդ օրից անցել էր երկու ամիս: Վարպետ Սէթի տունը նմանում էր հիւանդանոցի: Հինգ հոգի տառապում էին տիֆ ախտով: Ինքը գերդաստանի հայրը, ընկած ցնցոտի անկողնի մէջ, մտածում էր ոչ միայն իւր ցաւի, — այլ գրեթե խաւորապէս իւր որդիների հացի մասին: Մանուկները անդադար լաց էին լինում, պահանջելով մի կտոր հաց:

Դուռը բացվեցաւ և ներս մտաւ մի տխուր պատանի: Իսկոյն վրայ թափվեցան մանուկները «բերիւր, եղբայր» ասելով: Պատանին մի խօսք անգամ չասեց: Նա խօսելու ընդունակութիւնը կարծես կորցրել էր:

— Բերիւր, աղաղակում էին բոկոտն մանուկները և թափվում եղբօր վերայ:

— Հանգիստ եղէք, շուտով կը բերեմ, ասաց և երեսը յետ դարձրեց, որ իւր արտասուքը չը տեսնեն:

Եկող պատանին վարպետ Սէթի անդրանիկն էր. նա գնացել էր հաց ձարելու: Փոքրիկ մանուկները տեսնելով դատարկաձեռն եղբօրը, սկսեցին դառն կերպով լաց լինել: Նրանց ձայնը կտոր-կտոր էր անում թշվառ հօր սիրտը. .

Հմայակը (այսպէս էր անդրանիկ որդու անունը) տեսնելով, որ իւր լաց լինելով աւելի կ'յուսահատվին նրանք, սկսեց փոքր ինչ սիրտ տալ: Պատից վեր բերեց իւր քնաչը և ըս-

կսեց դողտրիկ կերպով նվագել: Նրա փափուկ մատները շատ վարժ էին քնար ածելում: Նա հարիւրաւոր քաղցր եղանակներ նվագեց, բայց չը կարողացաւ սփռիւն մանուկների սիրտը: Նրա թեկերի ձայնը կը լացացնէր ամենաանբզգայ մարդուն անգամ:

Մանուկները դադարեցան լալուց:

Դ.

Նրանի նորան, ով որ աղքատին հոգ կը տանի, նեղութեան օրը ծէրը կօգնէ նրան:

Սա. Դոմ. ԽԱ. I.

Ձմեռային ցուրտը հետզհետէ սաստկանում էր: Սառած գետինը կարծես կամենում էր հազար տեղից տրաքվել: Նեղ փողոցներով շտապով գնում էին երեք հոգի:

Նրանք կարծես չէին զգում եղանակի անախորժ քամին, որը ձիւնի բիւրեղները անդադար ծեփում էր նրանց երեսին:

— Ետ ալետք է գնա՛նք, խփեմ, հարցրեց նրանցից մէկը:

— Ոչ, շուտով կը հասնենք, պատասխանեց միւսը:

— Հապա մտիկ արէք, տղայք, այս ինչ քնարի ձայն է, խօսեց երրորդը:

— Իրաւ շատ լաւ է ածում, հաստատեց մէկը:

— Գնանք, տեսնենք որտեղ են ածում:

— Հէնց մեր պտրած տեղը:

Երեք ընկերները գնացին գէպի քնարի ձայնի կողմը,

որ իրօք վարպետ Սէթի տանն էին ածու՛մ: Քնար ածողը նրա որդի չմայակն էր: Նա դեռ ուսմանն ընթացքը չաւարտած, այնուհետև սովորում էր մի վարպետի մօտ հիւսնութիւն: Երիտասարդները արձանացած պատուհանի տակ լսում էին երգի տխուր ելեէջները:

Յանկարծ երգի ձայնը կտրվեց և ներսից լսելի եղան հետեւալ խօսքերը:

— Աննա, միթէ մի կտոր հաց չը կար որ լացը կտրէիր:

— Ի՞նչ էս խօսում, որ լինէր, ի՞նչու չէի տալ: Ա՛խ, Տէր Աստուած. . .

— Ինչո՞ւ թոնիրը չը վառեցիր:

— Փայտի կտոր չը կար, երեկ Ոսկաննայէն բերել էինք, այսօր երես չը բռնեց. . .

— Հայրիկը բնած է:

— Ո՛վ գիտէ, ոչ բուն լինելն է յայտնի, ոչ արթուն: Ո՛հ, Տէր, օգնիր մեզ:

Ալ եջին խօսքերը այնպիսի եղանակով արտասանվեցան, որ կարծես նետի պէս ցցվեցան դրսում եղող երիտասարդների սրտերում:

— Լսեցի՞ք, տղայք, խօսեց նրանցից մէկը:

— Հարկաւոր է օգնել ասաց միւսը:

— Ես պատրաստ եմ, վերայ բերեց երրորդը:

Խօսող երիտասարդները հեռացան պատուհանից և խորհուրդ արին, որ մէկը գնայ մի քանի ֆունտ հաց առնի, իսկ առաւօտեան բժիշկ հրաւիրեն և հարկաւոր պիտոյբները լրացնեն:

— Ես գնում եմ հաց բերելու, ասաց մէկը և հեռացաւ:

Նրա ընկերները նոյն պէս հեռացան իրարից և անհետացան գիշերային մթութիւնի մէջ:

Պարոյրը գնեց մի հաց: Հացը ճեղքեց այնքան՝ որ կարելի էր մէջը մի տոմսակ դնել: Յետոյ հանեց իւր յիշատակարանը, կտրեց նրանից մի թերթ և դրեց հետեւալը. «Ընկե՛ր, մի տրտմիլ, ոլորմած Տէրը իւր ստեղծածին ան-
«Լս ընամ չի թողնիլ: Բնդունիր այս փոքրիկ նվերը: Տէր վե-
«Ճակը կը բարեփոխվի, այդպէս չի մնալ»:

Պարոյրը երբ գրութիւնն աւարտեց, հանեց բաղկից մի սպիտակ գոյնի թղթադրամ, ծալեց տոմսակի հետ և դրեց հացի մէջ: Մի քանի վարկեանից յետոյ արդէն վարպետ Սէթի դրան մօտ էր: Նա լսեց ներսից մի ձայն՝ որ լալով տաւ:

— Քոյրիկ, հաց տուր. . .

— Մի լար, Լեոն ջան, մի լար, առաւօտեան Յիսուսը հաց կը տայ, մի լար. . .

Պարոյրը այլ ևս չը կարողացաւ համբերել շտապով բախեց դուռը: Դուռը բացեց մի գեղեցկադէմ պատանի:

— Ահա առ, ընդունիր, Յիսուսը ուղարկեց, ասաց Պարոյրը տալով պատանուն հացը և մի վարկեանի մէջ անհետացաւ:

Պատանին մնաց շվարած: «Սա ո՞վ պէտք է լինի» մտածում էր նա ինքն իրեն:

Տան մէջ տիրեց ուրախութիւն և մի տեսակ երկիւղ: Ո՞վ պէտք է լինի, մտածում էին մեծերը, իսկ փոքրերը, երբ տեսան ձկնի պէս սպիտակ հացը՝ այնպէս կարծեցին թէ երկնքից իջաւ: Նրանք սկսեցին թռչկոտալ և ուրախանալ:

Լացը ուրախութեան փոխկեցաւ: Տունը կեանք առաւ: Մանուկները, որպէս անմեղ թռչնակներ, սկսեցին երգել:

Նրանց ուրախութիւն պատճառով երիտասարդը այն օրը համարում էր իրեն աշխարհիս երեսին ամենաերջանիկը:

Նա գիտէր որ միմեան բարեգործութիւնով կարելի է խիղճը հանգստացնել: . .



15148

2013

